

զհետէ կերպարանքներ առած է՝ Տէվէքսէ (Սարգիսեան Հ. Ն. Տեղագրութիւնք, Վենետ. 1864, էջ 63 եւ Տախտակ, Տեւու վանք (Առաք. Դավրիժեցի, Էջմ. 1896, էջ 630), նաեւ Հ. Զամչ. Գ., էջ 516, Հ. Աճառեան, Հայոց նոր վկաները, Էջմ. 1903, էջ 570 եւն) Տէւոցայ (Գ. ք. Աղան. Դիւան Ժ., էջ 395), Դեւոցայ եւ վերջապէս Դեւ-օձ:

Վանքը ժամանակաւ առանձինն Առաջ-նորդարան եղած է, յատուկ եպիսկոպոս-առաջ-նորդներով, որմէ կը կախուէին, ինչպէս վերն յիշեցի, շրջակայ քանի մը գիւղեր:

Այս վանքին բնակիչներէն եւ Առաջնորդ-ներէն շատ քիչ բան ծանօթ է. կը յիշուին՝ Ս. Գէորգայ միաբան Հայրսպետ արեղայ, որ նահատակեցաւ 1528ին կամ 1533ին հրով ի Սեբաստիա (Ա. Դավրիժեցի, էջ 630, Հ. Զամ-չեան, Գ., էջ 516, Գ. ք. Աղանեանց, Դիւան, Ժ., էջ 395, Հ. Աճառեանց եւն): Վատի-կանեան Մատենադարանը (Bibl. Ap. Vat. Mss. Borg. P. F. Armeno 5—L 11—6) կայ Սաղմոսարան (Ոսկեփորիկ) գրեալ ՌԻԴ (1595) ի ձեռն Ալեքսիանոս երիցու “ի յեր-կիր սեբաստիոյ ի գիւղն որ կոչի տեւոցա ընդ հովանեաւ սուրբ աստուածածին եւ սուրբ լու-սաւորչին սուրբ Թէոդորոս եւ սուրբ Փրկչին,, 1905ին Կ. Պոլսի շուկան հայ հնավաճառի մը քով տեսած եմ խորանի առջեւ կախելու “գոգնոց,, մը, որուն վրայ ոսկեթել բանուած էր հետեւեալ վերտառութիւնը. “ՅԻՇՏԿ Է